ՀՀ Լոռու մարզի Սպիտակի համայնքապետ
պարոն Քաջայր Նիկողոսյան
հասցե՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան 7

ՀՀ քաղաքացի Ալվարդ Դարչինյանից
հասցե՝ Լոռու մարզ, ք. Սպիտակ, Քըրք Քըրքրորյան փ. 85 տնակ

Ալվարդ Դարչինյանի ներկայացուցիչ՝
փաստաբան Ռուբեն Աշոտի Մխիթարյան
արտոնագիր թիվ 2434
ծանուցման հասցեն՝ ք. Աբովյան, Հանրապետության 15Ա, բն. 66

ԴԻՄՈՒՄ

Հարգելի պարոն Նիկողոսյան,

Հայտնում ենք, որ 18.11.2009 թվականին Ալվարդ Դարչինյանը դիմում (այսուհետ նաև՝ Դիմում) է ներկայացրել Սպիտակի համայնքապետին՝ տեղեկացնելով, որ 1988 թվականին տեղի ունեցած երկրաշարժից առաջ ընտանիքի անդամների հետ բնակվել է Սպիտակ քաղաքի Շահումյան փողոցի 62 շենք, բնակարան 29-ում (երեք սենյականոց բնակարանում), երկրաշարժից հետո՝ 2003 թվականի նոյեմբերի 17-ին ստացել է երկու սենյականոց բնակարան Թորոսյան փողոց շենք 4, բնակարան 7 հասցեում: Դիմումով Ալվարդ Դարչինյանը համայնքապետին խնդրել է տրամադրել մեկ սենյականոց բնակարան, քանի որ նախկինում բնակվել է երեք սենյականոց բնակարանում, սակայն իրենց տրամադրվել է ընդամենը երկու սենյականոց բնակարան:

Ի պատասխան Ալվարդ Դարչինյանի կողմից ներկայացված Դիմումի՝ Սպիտակի համայնքապետ Գագիկ Սահակյանը 04.12.2009 թվականին հայտնել է, որ Դիմումը գտնվում է քննարկման փուլում: Դրանից հետո չի կայացվել և Ալվարդ Դարչինյանը չի ստացել Դիմումի վերաբերյալ որևէ որոշում, թեկուզ դիմումը մերժելու մասին:

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *եթե վարչական ակտ ընդունելու իրավասություն ունեցող վարչական մարմինը սույն օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի*

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 5-1045
ԳՈՐԾ N 28
«05» «03» 2015թ

«ա», «դ» և «ե» կետերի պահանջների պահպանմամբ ներկայացված դիմումի հիման վրա հարուցված վարույթի արդյունքում օրենքով սահմանված ժամկետում որևէ որոշում չի կայացնում, ապա վարչական ակտը համարվում է ընդունված, և դիմողը կարող է ձեռնամուխ լինել համապատասխան իրավունքի իրականացմանը, բացառությամբ սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքերի:

Հաշվի առնելով, որ 18.11.2009 թվականին Ալվարդ Դարչինյանի կողմից ներկայացված Դիմումի արդյունքում Սպիտակի համայնքապետարանը՝ որպես վարչական մարմին օրենքով սահմանված ժամեկետում որևէ որոշում չի կայացրել՝ խնդրում ենք ընդունված համարել Ալվարդ Դարչինյանի՝ Դիմումով ներկայացրած պահանջը, այն է՝ վերջինիս տրամադրել մեկ սենյականոց բնակարան:

Կից ներկայացվում է.

1. Դիմումի պատճենը,
2. Սպիտակի համայնքապետ Գագիկ Սահակյանի 04.12.2009 թվականի գրության պատճենը,
3. Դիմողի ներկայացուցչի լիազորագիրը և արտոնագրի պատճենը:

Ալվարդ Դարչինյանի ներկայացուցիչ՝ **Ռուբեն Մխիթարյան**

Լիազորագիր

ք. Երևան 20.10.2023թ.

Ես՝ Ալվարդ Դարչինյանս, (անձը հաստատող փաստաթուղթ՝ AV0550161, տրված՝ 06.12.20222., 052-ի կողմից,) հասցեն՝ ՀՀ, Լոռու մարզ, ք. Սպիտակ, Քըրք Քըրքորյան փողոց, 85 տնակ,

Լիազորում եմ ՀՀ Փաստաբանների պալատի անդամ, փաստաբան՝ Ռուբեն Աշոտի Մխիթարյանին (արտոնագիր՝ N 2434)

Իմ անունից հանդես գալ ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում, Հայաստանի Հանրապետությունում բոլոր պետական և տեղական ինքնակառավարման մարմիններում, այդ թվում՝ ՀՀ բոլոր դատական ատյաններում, ՀՀ դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունում, կատարել դատավարական գործողություններ, պաշտպանել իմ շահերը, կատարել ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 56-րդ հոդվածով և «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածով նախատեսված գործողություններ, ներառյալ՝

1) հայցադիմում և դիմում ստորագրելու,
2) արբիտրաժային համաձայնություն կնքելու և վեճն արբիտրաժ հանձնելու վերաբերյալ համաձայնություն տալու,
3) հայցապահանջներից ամբողջովին կամ մասնակիորեն հրաժարվելու,
4) հայցապահանջներն ամբողջովին կամ մասնակիորեն ընդունելու,
5) հայցի առարկան և հիմքը կամ դրանցից յուրաքանչյուրը փոխելու,
6) հաշտության համաձայնություն կնքելու,
7) հաշտարարության վերաբերյալ համաձայնություն կնքելու,
8) արտոնագրված հաշտարարի մասնակցությամբ հաշտարարական գործընթացին մասնակցելու,
9) լիազորություններն այլ անձի փոխանցելու (վերալիազորում կատարելու),
10) դատական ծանուցումները և դատավարական փաստաթղթերն ստանալու,
11) դատական ակտերը բողոքարկելու,
12) կատարողական թերթ տալու վերաբերյալ դիմում ներկայացնելու,
13) բռնագանձված գույքը և (կամ) դրամն ստանալը,
14) հարկադիր կատարողի գործողությունների դեմ բողոքարկելը:

Իմ անունից անել հայտարարություններ, միջնորդություններ, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից և այլ կազմակերպություններից, ստանալ և ներկայացնել անհրաժեշտ փաստաթղթեր:

Սույն լիազորագիրը տրված է երեք տարի ժամկետով:

Լիազորող՝ **Ալվարդ Դարչինյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏ

ПАЛАТА АДВОКАТОВ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

CHAMBER OF ADVOCATES
OF THE REPUBLIC OF ARMENIA

Փաստաբանական գործունեության
Արտոնագիր № 2434

ՌՈՒԲԵՆ ՄԽԻԹԱՐՅԱՆ

Лицензия № 2434
на право адвокатской деятельности

РУБЕН МХИТАРЯН

License № 2434
of advocate's activity

RUBEN MKHITARYAN

Տրված է անժամկետ
Выдано бессрочно
Is given for unlimited time

Նախագահ՝
Председатель
Chairman

Արա Զոհրաբյան
Ара Зограбян
Ara Zohrabyan

22.05.2018

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնք, ՀՀ,
Լոռու մարզ, ք. Սպիտակ, Շահումյան 7, Հեռ. (0255) 22500 ,
municipalityspitak@gmail.com

N 306
04 դեկտեմբեր 2009թ.

ԱԼՎԱՐԴ ԴԱՐՉԻՆՅԱՆԻՆ
ՀՀ, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ, Ք.ՍՊԻՏԱԿ
Քըրք Քըրքորյան Փ. , 8

Ի պատասխան Սպիտակի քաղաքապետին ուղղված Ձեր դիմումի՝ երկրաշարժի հետևանքով կորցրած Շահումյան 62/29 հասցեի պետական բնակարանի փոխարեն բնակարանով փոխհատուցելու, հայտնում ենք, որ Ձեր դիմումը գտնվում է քննարկման փուլում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԳԱԳԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ

Կատ. Շինարար.,տրանսպորտի և կոմունալ սպաս. բաժ.գլխ.մասն.՝ Գ. Ասատրյան

[illegible]

[illegible]

[illegible]